UK International Development
Partnership | Progress | Prosperity

Media Diversity Institute

CyberHUB

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

ՀԵՏԵՒԵ՛Ք ՄԵԶ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՄԻՆՉ ԿՍԿՍԵՆՔ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ԱՐԻ՛ ԿԻԲԵՌՉԱՏ

chat.cyberhub.am

UK International Development
Partnership | Progress | Prosperity

Media Diversity Institute

CyberHUB

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

ԱՌԱՎԵԼ ԱՊԱՀՈՎ ԵՒ ԱՆՎՏԱՆԳ ԹՎԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐԻ՛ ԿԻԲԵՌՉԱՏ

chat.cyberhub.am

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գեվորգ հայրապետյան

ԱՏՊ փորձագետ, dpHub

chat.cyberhub.am

Ի՞նչ է անձնական տվյալը

Արդյո՞ք անձնական տվյալ է
- մարդու անունը
- կազմակերպության անվանումը
- մարդու լուսանկարը
- հեռախոսահամարը
- մարդու շարժուձեւը

chat.cyberhub.am

Ի՞նչ է անձնական տվյալը

Անձնական տվյալ – ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը

chat.cyberhub.am

ԱՏՊ ոլորտի այլ հասկացություններ

- անձնական տվյալի մշակումը
- անձնական տվյալներ մշակողը
- անձնական տվյալների սուբյեկտը

chat.cyberhub.am

Անձնական տվյալների պաշտպանության կարեւորությունը.

Անձնական տվյալների պաշտպանության վիճակը՝ ԱՏՊ իրավունքի կայացման որոշ նախապատմություն եւ ԱՏՊ ոլորտի համակարգային խնդիրները

chat.cyberhub.am

Զգայուն անձնական տվյալներ

Անձնական կյանքի տվյալ – անձի անձնական կյանքի, ընտանեկան կյանքի, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, մտավոր, սոցիալական վիճակի վերաբերյալ կամ նման այլ տեղեկություններ

chat.cyberhub.am

Զգայուն անձնական տվյալներ

Կենսաչափական անձնական տվյալ – անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկություններ

Հատուկ կատեգորիայի անձնական տվյալ – անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ

Հանրամատչելի անձնական տվյալներ

Հանրամատչելի անձնական տվյալներ - տեղեկություններ, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ իր անձնական տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ

Օրինականության սկզբունքը

Անձնական տվյալներ մշակողը պարտավոր է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ:

Անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

Տեսահսկումը դպրոցներում – օրինակ 1

chat.cyberhub.am

Համաչափության սկզբունքը

Տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Անձնական տվյալներ մշակողը պարտավոր է անձնական տվյալները մշակել այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է օրինական նպատակներին հասնելու համար:

Արգելվում է այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ:

Արգելվում է անձնական տվյալների մշակումը, եթե տվյալները մշակելու նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված կերպով:

Անձնական տվյալները պետք է պահպանվեն այնպես, որ բացառվի տվյալների սուբյեկտի հետ դրանց նույնականացումն ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է դրանց նախօրոք որոշված նպատակներին հասնելու համար:

Տեսահսկումը դպրոցներում – օրինակ 2

chat.cyberhub.am

Հավաստիության սկզբունքը

Մշակվող անձնական տվյալը պետք է լինի ամբողջական, ճշգրիտ, պարզ և հնարավորինս թարմացված:

chat.cyberhub.am

Տվյալների օրինական մշակման հիմքերը

- Օրենքներով ուղղակիորեն նախատեսված լինելը
- Համաձայնությունը
- Հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված լինելը

chat.cyberhub.am

Համաձայնության չափանիշները

- «ցանկացած կամահայտնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը»
- «ազատ տրված»
- «որոշակի»
- «տեղեկացված»

Դպրոցների կայքէջերը սոցիալական ցանցերում

chat.cyberhub.am

Անձնական տվյալների անվտանգությունը

Անձնական տվյալները մշակելու ընթացքում մշակողը պարտավոր է օգտագործել գաղտնագրման միջոցներ՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական համակարգերի պաշտպանվածությունը պատահական կորստից, տեղեկատվական համակարգեր անօրինական մուտք գործելուց, անձնական տվյալների անօրինական օգտագործումից, ձայնագրումից, ոչնչացումից, վերափոխումից, ուղեփակումից, կրկնօրինակումից, տարածումից և այլ միջամտությունից ապահովելու համար:

- Անվտանգության տեխնիկական միջոցառումներ
- Անվտանգության կազմակերպչական միջոցառումներ

chat.cyberhub.am

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ

chat.cyberhub.am